ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2014 թվականի N 131 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 159-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2014 թվականի 4-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր, Իծաքար, Աչաջուր, Այգեպար և Գետահովիտ համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Ք. Իջևան
13 հոկտեմբերի 2014թ.

Հ ավել վ ած

ՀՀ Տավուշի մարզպետի

13 հոկտեմբերի 2014 թ. թիվ 131 -Ա որոշման

2014 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր, Իծաքար, Աչաջուր, Այգեպար և Գետահովիտ համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող կաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Վերին Կարմիրաղբյուր	4-րդ եռամսյակ	Քաղաքաշինություն,բնապահպանություն, աղբահանություն, առևտուր	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Միսակ Մելքումյան Սամվել Գևորգյան Միքայել Ղալումյան Գուրգեն Հարությունյան
2.	Իծաքար		բնապահպանություն, հողաշինություն, քաղաքաշինություն,	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Համլետ Փիրումյան Միսակ Մելքումյան

3.	Աչաջուր	բնապահպանություն, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն, քաղաքաշինություն, առևտուր	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Միքայել Ղալումյան Համլետ Փիրումյան Միսակ Մելքումյան Գուրգեն Հարությունյան Ժորա Խաչատրյան
4.	Այգեպար	Ֆինանսներ ,բնապահպանություն, քաղաքաշինություն	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Ժորա Խաչատրյան Սամվել Գևորգյան Միսակ Մելքումյան
5.	Գետահովիտ	բնապահպանություն, հողաշինություն, Ֆինանսներ,առևտուր	Խմբի ղեկավար Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Համլետ Փիրումյան Ժորա Խաչատրյան Գուրգեն Հարությունյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ֆ. ԱՓԻՆՅԱՆ